

նակէ . վասն զի պալատի մը սիւները ինչուան հիմա կեցած են աւերակներուն մէջ . միայն թէ հիմա քառասունին տեղը հազիւ թէ ինը հատ մնացեր են : Բայ սիւները մոխրագոյն մարմարիոնէ են, տրամագիծնին հինգ ոտնաչափ , ու բարձրութիւննին գրեթէ եօթանասունուերկու ոտնաչափ : Պերսեպոլի աւերակներուն մէջ գրեթէ միայն աս պալատին սիւներն են որ մնացեր են . ուրիշ ամենեւին չենք կամ հնութիւն չերենար : Հիմակուան Պարսիկները Պերսեպոլի աւերակներուն թափի շէնքի ալ կ'ըսեն , ու աւանդութիւն ունին թէ իրենց Նիմիտ թագաւորին շինած քաղաքն է եղեր :

Պերսեպոլի աւերակներուն հիւսիսային կողմը լեռ մըն ալ կայ որ պարսկերէն Վախշի Բիսթէ կ'ըսուի : Բնակայ իրեք հարիւր կանգունէն աւելի բարձրութեամբ ճերմակ մարմարիոնէ ժայռ մըն է . ու զարմանալին աս է որ վրան լեցուն են զանազան փորուածքներ ու քարանձաւներ , որ անշուշտ մեծամեծաց գերեզմաններ են եղեր : Բայ լեռան պատկերն է հոս դրածնիս :

Յունաց պատմիչներուն ըսածին նայելով , մեծին Բլեքսանդրի ժամանակը Պերսեպոլի մէջ մեծ պալատ մը կայ եղեր , ու Պարսից թագաւորները իւրօրոք առնէն 'ի վեր անբաւգանձ գիզեր են եղեր անոր մէջ . աս պալատը ու քաղաքին մէկ մասը այրեր է մեծն Բլեքսանդր . վասն զի ինչպէս որ Յունաց ողորկ պատմութիւններուն մէջ կը կարգանք , Բլեքսանդր Պերսեպոլիսը առնէլէն ետեւ , իր կանանց մէկը Տայիս անունով՝ ան պալատին մէջ կոտորտուելով քալած ժամանակը ըսած ըլլայ յունական թեթեւութեամբ կամկանացի հպարտութեամբ մը թէ՝ « Ինչ աղէկ բան կ'ըլլար որ աս Վսեքսեսի պալատը մոխիր դարձնէինք , ինչպէս որ ինքը

մեր Բլեքսանդր այրեց մոխիր դարձուց . ու մեր ետեւէն եկողներն ըսէին թէ քաջ զորավարներուն ընել չկրցածը կնիկ մարդուն մէկը ըրաւ , այսինքն Բլեքսանդր վրէժը Պերսեպոլիսէն առաւ » : Բլեքսանդր ալ գինով ըլլալով՝ մէկէն ջահը ձեռք առաւ , կրակ տուաւ պալատին ու քաղաքին , մոխիր դարձուց :

ԶՈՒՄԻՃԱՅԻ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

Իէս գեորգիւն արհամարհող է՝ ըլլայ :

ՍԱՐԴՈՒՆ մէկը կ'ուզէ եղեր ձի մը գնել . կը հարցնէ իր բարեկամներէն մէկուն թէ ձիուն տարիքը ինչէն կ'իմացուի . « Ինչուաներէն » կ'ըսէ բարեկամը : Երբեք աս մարդը ձի ծախողին՝ ձի մը հանէ կ'ըսէ . անիկայ ալ գեղեցիկ մարդուկ մը կը բերէ գիմացը : Եւ ուտ մը ասիկայ ձիուն բերանը կը բանայ , ու լաւ մը նայելէն ետքը՝ արհամարհութեամբ ետ կը հրէ ձին , ու կ'ըսէ տիրոջը . « Բայ ձիդ քեզի ըլլայ . երեսունուերկու տարեկան է » : Ձիուն ահաւանքը համրեր է եղեր :

Իժեքտան օրինակ :

ՊԱՐՍԻՅ Իսլաիւրուան թագաւորը օր մը որսի ելած ըլլալով , բռնած որսէն քիչ մը բան ուտել ուզեր է , բայց աղչկայ եղեր . կը խրկէ մարդիկն որ մօտիկ գեղէն առնեն բերեն . միայն թէ գինն ալ վճարեցէք կ'ըսէ : Եւ հարցնեն ծառաները թէ կտոր մը աղին գինը թագաւոր մը չվճարէնէ ինչ կ'ըլլայ . — « Ինչ որ այսօր թագաւոր մը իր հպատակներէն մէկուն պարտեղէն խնձոր մը փրցնէ , վաղը իր իշխանները ան պարտիզին ծառերը կը կտրեն » կ'ըսէ նուիրուան :